ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Նախորդ դասում մենք ուսումնասիրեցինք փախստականների պաշտպանության մի շարք հիմնական սկզբունքներ՝

- ապաստանի սկզբունքը,
- խտրականության արգելքը,
- անօրինական մուտքի ու կացության պատժելիության արգելքը,
- երկիրը լքելու իրավունքը,
- ընտանիքի միասնականության սկզբունքը
- երկարատև լուծումների և միջազգային համագործակցության սկզբունքները:
- փախստականի կարգավիճակի և ապաստանի հայցման այն ընթացակարգային կարգավորումները, որոնք սահմանվել են ներպետական օրենսդրությամբ, և այդ ընթացակարգերի արդյունավետությունն ապահովող օրենսդրական երաշխիքները:

Ապաստանի ընթացակարգերը

Դաս 2-ի շրջանակներում վերհանվեց «փախստական» հասկացության բովանդակությունը և ցույց տրվեց, որ անձը, ով բավարարում է 1951 թ. Կոնվենցիայով և 1967 թ. Արձանագրությամբ սահմանված վավերապայմաններին՝ հանդիսանում է փախստական՝ մինչ վերջինիս նման կարգավիճակ պաշտոնապես տրամադրելը: Հարկ է նկատել, սակայն, որ վերոնշյալ փաստաթղթերով ամրագրված հիմնական երաշխիքային նորմերը փախստականների նկատմամբ սկսում են գործել այն պահից, երբ նրանք ընդունող պետության կողմից պաշտոնապես ճանաչվում են որպես փախստական:

Կոնվենցիան, սակայն, չի պարունակում որևէ նորմ այն ընթացակարգերի վերաբերյալ, որոնց կիրառման արդյունքում է որոշվում անձին փախստականի կարգավիճակի շնորհման բավարար հիմքերի առկայությունը կամ բացակայությունը, իսկ ընթացակարգերի տեսակների ընտրության ազատությունը վերապահվում է յուրաքանչյուր անդամ պետության:

Դաս 2-ից վերհիշեք, թե ինչպես է սահմանվում փախստականը:

Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակի և ապաստանի շնորհման ընթացակարգերը կարգավորվում են «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխով:

Մասնավորապես, փախստականի կարգավիճակի և ապաստանի տրամադրման ընթացակարգը վարչական վարույթ է, որն իրականացվում է լիազոր մարմնի կողմից՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքին համապատասխան, եթե մասնավոր օրենքով այլ բան նախատեսված չէ:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխի համակարգային վերլուծությամբ կարելի է փաստել, որ փախստականի կարգավիճակի և ապաստանի տրամադրման ընթացակարգն ըստ էության բաղկացած է ապաստան հայցելու, ապաստանի հայցի քննության և որոշման կայացման փուլերից:

Ապաստանի հայցում: Ապաստանի հայցումը կարող է դրսևորվել ապաստանի խնդրանք և, այնուհետև, լիազոր մարմնին ապաստանի դիմում ներկայացնելով կամ ուղղակի լիազոր մարմնին ապաստանի դիմում ներկայացնելով:

Մասնավորապես՝ անձը, ով ունի Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն գտնելու ցանկություն, բանավոր, գրավոր, ժեստերի լեզվով կամ հաղորդակցության որևէ այլ միջոցով առերես արված ցանկացած հայտարարությամբ ապաստան ստանալու խնդրանքով կարող է դիմել Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերին (պետական սահմանի անցման կետերում) կամ լիազոր մարմնին կամ Ոստիկանությանը (ՀՀ տարածքում գտնվելու դեպքում) կամ ազատազրկման վայրի վարչակազմին (ազատազրկման վայրում):

Այն դեպքում, երբ ապաստանի խնդրանքը ներկայացվել է ՀՀ սահմանապահ զորքերին, Ոստիկանությանը կամ ազատազարկման վայրի վարչակազմին, վերջիններս հարցազրույց են անցկացնում ապաստան հայցողի հետ՝ ապաստան հայցողի և նրա ընտանիքի բոլոր ուղեկցող անդամների մասին անձնական տվյալներ, ինչպես նաև ծագման երկրից դեպի Հայաստանի Հանրապետություն ուղևորության նկարագրությունը ստանալու նպատակով, և ապաստանի խնդրանքի դիմումը՝ վերոնշյալ տեղեկատվության հետ միասին, փոխանցում են լիազոր մարմնին:

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիները (քաղաքացիություն չունեցող անձինք), որոնք ապաստան ստանալու մտադրություն ունեն, կարող են, որպես ապաստանի խնդրանքին հաջորդող քայլ կամ առանց ապաստանի խնդրանքի, անմիջապես **դիմել** լիազոր մարմնին: **Ապաստանի դիմումը** գրավոր ներկայացվում է լիազոր մարմնին՝ հայերեն կամ հայցողի մայրենի լեզվով կամ ՄԱԿ-ի լեզուներից որևէ մեկով:

Ապաստան հայցողի դիմումը պետք է պարունակի Հայաստանի Հանրապետության տարածքում ապաստան հայցելու պատճառների մանրամասն նկարագրություն և հնարավոր հետապնդումների երկյուղի հիմնավորումներ կամ իր քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկիրը լքելուն հարկադրող պատճառների մասին տեղեկատվություն:

Անձն կարող է ապաստան հայցել անձամբ իր **(անհատական դիմում)**, այնպես էլ իր հետ համատեղ բնակվող և փախստականի քաղաքացիությունից տարբերվող արդյունավետ պաշտպանություն տրամադրող որևէ այլ պետության քաղաքացիություն չունեցող բարեկամների (ընտանիքի անդամների) համար **(միասնական դիմում)**: Ընդ որում, միասնական դիմումի ներկայացումը չի սահմանափակում ընտանիքի յուրաքանչյուր անդամի անհատական դիմում ներկայացնելու իրավունքը:

Ապաստանի հայցի քննություն: Ապաստանի դիմումն ընդունելուն և հաշվառելուն հաջորդում է լիազոր մարմնի՝ հարցազրույցի անցկացմանը, ներկայացված տվյալների ստուգմանը և ապաստանի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձեռքբերմանն ուղղված վարչարարությունը: Ընդ որում, նշված վարչարարության մեջ մեծ դեր են խաղում լիազոր մարմնի կողմից ծագման երկրի մասին հավաքագրած տեղեկությունները:

Այսպես, յուրաքանչյուր ապաստան հայցող (ընտանիքի չափահաս անդամ) պետք է մասնակցի լիազոր մարմնի անցկացրած հարցազրույցին: Վերոնշյալ սկզբունքից բացառություն կարող է նախատեսվել այն դեպքերում, երբ գործում առկա տեղեկությունները բավարար են դիմումի վերաբերյալ դրական որոշում կայացնելու համար կամ եթե ապաստան հայցողն ի վիճակի չէ կամ չի կարող մասնակցել հարցազրույցին իր կամքից անկախ տևական բնույթի պատճառներով:

Ծագման երկրի վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու անհրաժեշտության և մեթոդների մասին կկարդաք դաս 9-ում:

Հարցազրույցն անց է կացվում լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների կողմից, որոնք մինչ հարցազրույցը սկսելը ապաստան հայցողին տրամադրում են ապաստան հայցողի ծագման երկրի վերաբերյալ իրենց ձեռք բերած տեղեկությունները և այլ ապացույցները: Հարցազրույցի միջոցով լիազոր մարմինը պարզում է հետապնդման հիմնավոր երկյուղի կամ մարդու իրավունքների խախտումների համար հիմք համարվող փաստերի վերաբերյալ հայցողի փաստարկները և ձեռք է բերում անհրաժեշտ տվյալներ հայցողի բնակության վայրի,

երթուղու, այլ երկրներում հանգրվանելու, այլ երկրներում ապաստանի հայցեր ներկայացնելու հետ կապված, ինչպես նաև իր գործի համար անհրաժեշտ ցանկացած այլ տեղեկատվություն:

Հարկ է հաշվի առնել, որ հնարավոր են իրավիճակներ, երբ մեկ հարցազրույցը չի լինի բավարար վարչական մարմնի կողմից ներքին համոզմունք ձևավորելու համար: Հնարավոր են իրավիճակներ, երբ կառաջանա կրկնակի կամ լրացուցիչ հարցազրույցի անցկացման կարիք՝ հայցողի պնդումների և առկա փաստերի միջև հակասությունների, անհամապատասխանությունների կամ պակասող նյութերի վերաբերյալ բացատրություններ ձեռք բերելու նպատակով:

Ապաստանի հայցի քննարկումն անհրաժեշտորեն ներառում է նաև լիազոր մարմնի կողմից՝ **սեփական նախաձեռնությամբ**, վարչական տարբեր մարմիններից, այդ թվում՝ ազգային անվտանգության, արտաքին գործերի հարցերով լիազոր մարմնից, Ուստիկանությունից հայցողների, նրանց ընտանիքի անդամների, ծագման երկրի վերաբերյալ **տեղեկատվության ձեռքբերմանն** ուղղված գործողությունների իրականացում:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ վարույթի ընթացքում ձեռք բերված որևէ ապացույց չի կարող առավելություն ունենալ մնացյալ ապացույցների հանդեպ: Ընդ որում, ապաստանի հայցի քննության փուլում ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց պետք է հետազոտվի և գնահատման արժանանա մնացյալ ապացույցների հետ համադրմամբ:

Փորձեք ներկայացրեք այս դրույթի հիմքը:

Փախստականի կարգավիճակի և ապաստանի տրամադրման ընթացակարգը եզրափակվում է լիազոր մարմնի կողմից հայցողին փախստական ճանաչելու կամ հայցողին փախստական չճանաչելու մասին որոշման ընդունմամբ, որը ներառում է հայցողին Հայաստանի Հանրապետությունում ապաստան շնորհելու կամ մերժելու որոշումը (վերջինիս դեպքում՝ նաև անդրադարձ չվերադարձելիության սկզբունքի կիրառելիությանը): Ընդ որում, ապացույցների անբավարար լինելը որոշում չկայացնելու կամ մերժման որոշում կայացնելու համար հիմք լինել չի կարող:2

Ապաստանի տրամադրման արագացված ընթացակարգ

Օրենսդրությունը նախատեսում է նաև ապաստանի տրամադրման արագացված ընթացակարգ այն դեպքերում, երբ հայցն ակնհայտ անհիմն է (եթե հայցում նշված հիմքերը ակնհայտորեն չեն առնչվում փախստականի սահմանման օրենքով ամրագրված չափորոշիչներին) կամ երբ ներկայացվել է ապաստան տրամադրելու կրկնակի դիմում:

Նման ընթացակարգ կարող է կիրառվել ապաստանի տրամադրման ընդհանուր ընթացակարգի շրջանակներում՝ սկսած այն օրվանից, երբ ի հայտ են գալիս հայցի ակնհայտ անհիմն լինելը հավաստող հանգամանքները:

Որպես իմպերատիվ սահմանափակում՝ օրենսդիրը նախատեսում է, որ ապաստանի տրամադրման արագացված ընթացակարգը չի կիրառվում հատուկ կարիքներ ունեցող ապաստան հայցողների նկատմամբ:

Ընթացակարգային երաշխիքներ

Ապաստանի հայց ներկայացրած յուրաքանչյուր անձ երաշխավորված է վարչարարության այնպիսի հիմնարար սկզբունքներով, ինչպիսիք են օրինականության, կամայականության արգելքի, հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքները: Ի լրումն նշված հիմնարար

սկզբունքների՝ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը հայցողներին ապահովել է նաև մի շարք այլ երաշխիքներով, ինչպիսիք են լիազոր մարմնի կողմից իրավունքների և պարտականությունների մասին իրազեկվելու իրավունքը, ինչպես նաև փախստականի կարգավիճակ ստանալու համար սույն օրենքով սահմանված հիմքերի, ապաստանի դիմումի քննարկման ժամկետների, ընթացակարգերի, ապաստանի հայցից հրաժարվելու հետևանքների վերաբերյալ անվճար խորհրդատվություն ստանալու իրավունքը, անվճար հիմունքներով թարգմանչով ապահովվելու, ըստ ցանկության՝ փաստաբանի կամ ՄԱԿ ՓԳՀ-ի հետ կապ հաստատելու իրավունքը: Հարցազրույցի շրջանակներում, ըստ հայցողի ցանկության, հարցազրույցն անցկացնում է իր նախընտրած սեռի աշխատակիցը, անհրաժեշտության դեպքում՝ իր նախընտրած սեռի թարգմանչի միջոցով: Առանձնահատուկ ուշադրության է արժանի «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով երաշխավորված՝ հայցողի կողմից տրամադրված տեղեկատվության գաղտնիության ապահովման երաշխավորումը:

Ավելի մանրամասն ծանոթացեք «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասում:

Այսպիսով, այս դասի շրջանակներում Ձեզ ներկայացվեցին՝

- փախստականի կարգավիճակի և ապաստանի հայցման այն ընթացակարգային կարգավորումները, որոնք սահմանվել են ներպետական օրենսդրությամբ և այդ ընթացակարգերի արդյունավետությունն ապահովող օրենսդրական երաշխիքները:

Հաջորդ դասում կքննարկենք՝

- ապացուցման բեռի բաշխման սկզբունքային կանոնը և այդ կանոնի կիրառման հարաբերական չափորոշիչները,
- ծագման երկրի մասին տեղեկությունների հավաքագրման և գնահատման կանոնները:

Այդուհետ կանդրադառնանք հատուկ պաշտպանության կարիք ունեցող հայցողների իրավունքների երաշխավորման սկզբունքին:

ԲԱՌԱՐԱՆ

Ապաստան – լայն իմաստով՝ պետության կողմից իր քաղաքացի չհանդիսացող և իր ծագման երկրում հետապնդումների ենթարկվող անձին սեփական տարածքում տրամադրվող պաշտպանություն: 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածը սահմանել է յուրաքանչյուր անձի՝ հետապնդումից այլ երկրներում ապաստան փնտրելու և այդ ապաստանից օգտվելու իրավունքը: Փախստականների միջազգային իրավունքի շրջանակներում ապաստան պետք է տրամադրվի փախստականի կարգավիճակ հայցող կամ ստացած յուրաքանչյուր անձի, իսկ որոշ դեպքերում՝ նաև նրանց ընտանիքի անդամներին:

Ապաստան հայցող – անձ, որը հետապնդումից կամ լուրջ վտանգից պաշտպանություն է փնտրում իր երկիրը չհանդիսացող այլ երկրում և սպասում փախստականի կարգավիճակ ստանալու համար ներկայացրած դիմումի կապակցությամբ որոշում ընդունելուն:

Ապաստանի խնդրանք – Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն գտնելու նպատակով բանավոր, գրավոր, ժեստերի լեզվով կամ հաղորդակցության որևէ այլ միջոցով առերես արված ցանկացած հայտարարությամբ ապաստան ստանալու խնդրանք՝ ուղղված Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերին կամ միգրացիայի հարցերով լիազոր մարմնին կամ ՀՀ ոստիկանությանը կամ ազատազրկման վայրի վարչակազմին:

Ապաստանի դիմում – Հայաստանի Հանրապետության տարածքում պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ միգրացիայի հարցերով լիազոր մարմնին ուղղված գրավոր խնդրանք:

Անհատական դիմում – սեփական անձին Հայաստանի Հանրապետության տարածքում պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ միգրացիայի հարցերով լիազոր մարմնին ուղղված գրավոր խնդրանք:

Միասնական դիմում – սեփական անձին, ինչպես նաև համատեղ բնակվող և փախստականի քաղաքացիությունից տարբերվող արդյունավետ պաշտպանություն տրամադրող որևէ այլ պետության քաղաքացիություն չունեցող բարեկամներին (ընտանիքի անդամներին) Հայաստանի Հանրապետության տարածքում պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ միգրացիայի հարցերով լիազոր մարմնին ուղղված գրավոր խնդրանք:

Հարցազրույց – անձին հարցեր տալու կամ նրա հետ զրուցելու գործընթաց, որն իրականացվում է անձի մասին տեղեկություններ ստանալու կամ անձնական որակները որոշելու համար:

1. **Հայաստանի Հանրապետությունում իրականացվող ապաստանի ընթացակարգերը սահմանված են.**

Ա) 1951 թվականի Կոնվենցիայով, ընդ որում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի և 1951 թվականի Կոնվենցիայով սահմանված ընթացակարգերի միջև հակասության դեպքում գործում են Կոնվենցիայով սահմանված ընթացակարգերը – **սխալ է**: 1951 թ. Կոնվենցիան որևէ նորմ չի պարունակում ապաստանի ընթացակարգերի վերաբերյալ:

Բ) 1967 թվականի Արձանագրությամբ՝ որպես 1951 թվականի Կոնվենցիայով թույլ տրված բացթողնման լրացում – **սխալ է**: 1967 թվականի Արձանագրությունը որևէ նորմ չի պարունակում ապաստանի ընթացակարգերի վերաբերյալ:

Գ) ՄԱԿ ՓԳՀ Գործադիր Կոմիտեի 1977 թվականին կայացած քսանութերորդ նստաշրջանով ամրագրված հանձնարարականով, որով մանրամասն կարգավորվել են ապաստանի ընթացակարգերը և որը պարտադիր է բոլոր անդամ պետությունների համար – **սխալ է**: Նշված փաստաթուղթն առավելապես ուղերձ է բոլոր անդամ պետություններին՝ համապատասխանեցնելու որդեգրված ընթացակարգերը մի շարք ընդհանրական պայմաններին, ինչպիսիք են ընթացակարգերն իրացնող առանձին պետական մարմնի առկայությունը, ընթացակարգերի շրջանակում հայցողներին բավարար միջոցներով ապահովումը, այդ թվում՝ խորհրդատվության տրամադրումը, նյութերին ծանոթանալու հնարավորության ընձեռումը, թարգմանչով ապահովումը և այլն: Նշված հանձնարարականը ապաստանի ընթացակարգերի վերաբերյալ մանրամասն կարգավորում չի պարունակում:

Դ) Միայն «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով և նշված օրենքի հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերով – ճիշտ է: *Չնայած այն հանգամանքին, որ ապաստանի հիմնախնդիրների կապակցությամբ 1951 թվականի Կոնվենցիան է հանդիսանում «մայր» օրենք, սակայն այն որևէ նորմ չի պարունակում ընթացակարգերի վերաբերյալ՝ դրանց տեսակների ընտրության ազատությունը վերապահելով յուրաքանչյուր անդամ պետության:*

2. **«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ապաստանի հայցն իրենից ներկայացնում է.**

Ա) Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերին ուղղված խնդրանք Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն տրամադրելու մասին - **Սխալ է**: Պատասխանը թերի է: Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերին կարող է ուղղվել ապաստանի հայց՝ ապաստանի խնդրանքի տեսքով, սակայն կարող է ուղղվել նաև ՀՀ ոստիկանությանը կամ ազատազարկման վայրի վարչակազմին, ինչպես նաև անմիջականորեն՝ միգրացիայի հարցերով լիազոր մարմնին:

Բ) Միգրացիայի հարցերով լիազոր մարմնի դեմ ուղղված դատական հայց՝ ապաստան տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին – **սխալ է**: Միգրացիայի հայցն ըստ էության վարչական վարույթ հարուցելու վերաբերյալ դիմում է և դատավարական որևէ միջամտություն չի ենթադրում:

Գ) Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերին կամ լիազոր մարմնին կամ Ոստիկանությանը կամ ազատազրկման վայրի վարչակազմին ուղղված ապաստանի խնդրանք, իսկ այնուհետև միգրացիայի հարցերով լիազոր մարմնին ուղղված ապաստանի դիմում կամ ուղղակի լիազոր մարմնին ուղղված ապաստանի դիմում՝ Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ - ճիշտ է: *Ապաստանի հայցը կարող է դրսևորվել*

ինչպես ապաստանի խնդրանքով՝ ցանկացած արտահայտչաձևով, այնպես էլ լիազոր մարմնին ուղղված գրավոր դիմումով՝ որպես ապաստանի դիմում:

Դ) Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերի կամ Ոստիկանության կամ ազատազրկման վայրի վարչակազմի կողմից միգրացիայի հարցերով լիազոր մարմնին ուղղված դիմում՝ որոշակի անձի ապաստան տրամադրելու միջնորդությամբ – **սխալ է:** Նշված մարմինները, ապաստանի խնդրանք ստանալու դեպքում լիազոր մարմին են փոխանցում ապաստանի խնդրանքին առնչվող բոլոր փաստաթղթերը, սակայն նշված միջանկյալ գործողությունը ապաստանի հայցի էությունը չէ:

3. **Ապաստանի տրամադրման արագացված ընթացակարգ կիրառվում է այն դեպքերում, երբ.**

Ա) Ապաստանի հայցն ակնհայտ հիմնավոր է – **սխալ է**: Արագացված ընթացակարգ կիրառելու նման հիմք օրենսդրորեն ամրագրված չէ: Միաժամանակ, հարկ է նկատել, որ «ակնհայտ հիմնավոր» հայցերի դեպքում օրենսդիրը լիազոր մարմնին վերապահում է հարցազրույցից խուսափելու իրավասություն, ինչն, ըստ էության, չի կարող գնահատվել որպես արագացված ընթացակարգով գործի քննություն:

Բ) Ապաստանի հայցի վերաբերյալ վարույթը կասեցվել է և կասեցման հիմքերի վերացման պատճառով՝ վերսկսվել է – **սխալ է**: Ապաստանի հայցի քննության կասեցման միակ օրենսդրական հիմքն ապաստան հայցողի՝ հարցազրույցին չներկայանալը կամ լիազոր մարմնի հետ համագործակցելուց հրաժարվելն է: Նման դեպքերում կասեցման պահից սկսած երեք ամսվա ընթացքում հայցողի կողմից լիազոր մարմնին գրավոր դիմում ներկայացվելու դեպքում վարույթը վերսկսվում է և իրականացվում է գործի ըստ էության քննություն:

Գ) Միգրացիայի հարցերով լիազոր մարմնի կողմից դիմումով ներկայացված փաստարկների վերլուծությամբ ձևավորվում է ներքին համոզմունք, որ ապաստանի հայցն առավելապես անհիմն է, քան հիմնավոր – **սխալ է**: Արագացված ընթացակարգ կիրառելու համար պարտադիր է ապաստանի հայցով ներկայացված հիմքերի ակնհայտ անհամապատասխանությունը փախստականի սահմանման չափորոշիչներին:

Դ) Ապաստանի հայցն ակնհայտ անհիմն է կամ ներկայացվել է ապաստան տրամադրելու կրկնակի դիմում – ճիշտ է: *Այն դեպքերում, երբ ապաստանի հայցում նշված հիմքերը ակնհայտորեն չեն առնչվում օրենքով ամրագրված՝ փախստականի սահմանման չափորոշիչներին, ապաստանի հայցը գնահատվում է որպես ակնհայտ անհիմն: Միաժամանակ, ապաստան տրամադրելու առաջին դիմումի վերաբերյալ վերջնական բացասական որոշման կամ ապաստան տրամադրելու գործընթացը կարճելու մասին որոշման առկայության դեպքում անձը կարող է ներկայացնել ապաստան հայցելու կրկնակի դիմում՝ եթե ի հայտ են եկել նոր հանգամանքեր կամ ներկայացվում են ապացույցներ, որոնք հարգելի պատճառներով առաջին վարույթի շրջանակներում չէին ներկայացվել:*

4. **Ապաստան հայցողի դիմումը պետք է բովանդակի.**

Ա) Ապաստան հայցելուն հարկադրող հանգամանքերը հիմնավորող ապացույցներ – **սխալ է**: Ապաստանի դիմումով անձը պետք է փորձի հանգամանալից և համոզիչ շարադրել այն իրադարձությունները, որոնք իրեն հարկադրել են լքել իր քաղաքացիության (բնակության) երկիրը:

Բ) Ապաստան հայցելու պատճառների մասին մանրամասն նկարագրություն և հնարավոր հետապնդումների երկյուղի հիմնավորումներ, կամ իր քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկիրը լքելուն հարկադրող պատճառների մասին տեղեկատվություն – ճիշտ է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապասպանի դիմումն է այն հիմնական միջուկը, որի շուրջ ձևավորվում է վարչական վարույթը՝ ցանկալի է, որպեսզի ապասպանի դիմումն առավելագույնս տեղեկատվություն հաղորդի ապասպան հայցելու անհրաժեշտությունն առաջացնող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների մասին: Ընդ որում՝ դիմում լրացնելիս, ըստ անհարժեշտության, լիազոր մարմնի աշխատակիցների կողմից հայցողին կարող է ցուցաբերվել օգնություն:

Գ) Ապասպան հայցողի անունը, ազգանունը, հասցեն, միգրացիայի հարցերով լիազոր մարմնի լրիվ անվանումը, ապասպանի դիմումով ներկայացվող պահանջը (դիմումի առարկան), դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք ներկայացվում են), դիմումը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը, դիմողի ստորագրությունը, միասնական դիմում ներկայացնելու դեպքում՝ ընտանիքի անդամների համաձայնությունը – **սխալ է:** Օրենսդիրը դիմումին ներկայացվող որևէ ձևական պահանջ չի սահմանել՝ բացառությամբ դիմումի՝ գրավոր ձևով լինելու պահանջի:

Դ) Ապասպանի հայցի քննության համար լիազոր մարմնի կողմից կատարվող վարչական ծախսերի ամբողջական փոխհատուցման պատրաստակամություն – **սխալ է:** Ապասպանի հայց (ապասպանի խնդրանք) ներկայացնելուց ի վեր ապասպան հայցողը ծախսեր հոգալու որևէ պարտականություն չի կրում:

5. **Ապասպան հայցելու միասնական դիմումն իրենից ներկայացնում է.**

Ա) Ընտանիքի բոլոր անդամների կողմից անհատապես ներկայացված դիմումների փաթեթ, որոնց քննարկումն իրականացվում է միասնական սկզբունքով – **սխալ է:** Ապասպան հայցելու միասնական դիմում ներկայացվում է ընտանիքի անդամներից մեկի կողմից՝ բոլորի փոխարեն:

Բ) Ընտանիքի անչափահաս անդամների փոխարեն ընտանիքի չափահաս անդամի կողմից ներկայացված դիմում – **սխալ է:** Միասնական դիմում ներկայացնելու համար էական է միայն ընտանիքի անդամների (բարեկամների) համատեղ բնակվելու և փախստականի քաղաքացիությունից տարբերվող արդյունավետ պաշտպանություն տրամադրող որևէ այլ պետության քաղաքացիություն չունենալու հանգամանքը, գործունակության գործոնը էական նշանակություն չունի:

Գ) Միևնույն դրդապատճառներով իրենց քաղաքացիության (բնակության) երկիրը լքած օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց խմբի կողմից ներկայացված դիմում, որն ապահովում է խմբի՝ անհատական ընթացակարգերը շրջանցելու և օպերատիվ կերպով պաշտպանություն ստանալու իրավունքը – **սխալ է:** Զանգվածային ներհոսքի դեպքում գործում է ժամանակավոր պաշտպանության ինստիտուտը, մինչդեռ միասնական դիմումն ըստ էության անհատական ընթացակարգով քննվող դիմում է, որի դեպքում դիմումի հասցեատերն ամբողջ ընտանիքն է (համատեղ բնակվող բարեկամները):

Դ) Համատեղ բնակվող և փախստականի քաղաքացիությունից տարբերվող արդյունավետ պաշտպանություն տրամադրող որևէ այլ պետության քաղաքացիություն չունեցող բարեկամների (ընտանիքի անդամների) անունից ընտանիքի մեկ անդամի կողմից ներկայացված դիմում – ճիշտ է: *Ապասպան հայցող ընտանիքների դեպքում ընտանիքի որևէ անդամ կարող է ներկայացնել միասնական դիմում՝ ընտանիքի մյուս անդամների անունից՝ վերջիններիս համաձայնության դեպքում:*

6. Լիազոր մարմնի կողմից ապասպանի հայցի քննությունն իրականացվում է.

Ա) Ապաստանի դիմում ներկայացրած անձի հետ հարցազրույց անցկացնելով – **սխալ է:** Պատասխանը թերի է: Ապաստանի հայցի քննությունն իրենից ներկայացնում է դիմումով ներկայացված փվյալների ստուգմանը և անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձեռքբերմանն ուղղված վարչարարություն, այդ թվում՝ հարցազրույցի իրականացում:

Բ) Բացառապես գործի ի պաշտոնե քննության սկզբունքով, որում որևէ դերակատարում չունեն դիմումատուի կողմից ներկայացված փվյալները – **սխալ է**: Լիազոր մարմինն ապաստանի հայցի քննությունն իրականացնում է ի պաշտոնե քննության սկզբունքով, սակայն այդ սկզբունքը կիրառվում է նաև դիմումով ներկայացված հանգամանքները պարզելու նպատակով:

Գ) Հարցազրույցի անցկացման միջոցով, ինչպես նաև դիմումով ներկայացված փվյալների ստուգման և ապաստանի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձեռքբերմանն ուղղված վարչարարության իրականացմամբ – ճիշտ է: *Ապաստանի հայցի քննությունն իրականացնելիս լիազոր մարմնի կողմից պետք է իրականացվեն երկուստեք գործողություններ՝դիմումատուի հետ հարցազրույցների միջոցով վերջինիս սուբյեկտիվ ընկալումների իրատեսականությունը պարզելու, ինչպես նաև, այսպես կոչված, գրասենյակային գործողություններ՝ դիմումով ներկայացված հանգամանքների վերաբերյալ օբյեկտիվ իրականանությունը պարզելու նպատակով:*

Դ) ՀՀ ազգային անվտանգության ծառայության հետ համատեղ, որի արդյունքում կայացվող որոշման համար վճռորոշ նշանակություն ունի դիմումի վերաբերյալ ԱԱԾ-ի կողմից տրվող եզրակացությունը – **սխալ է**: Վարույթն իրականացվում է լիազոր մարմնի կողմից՝ միանձնյա և վարույթի շրջանակներում ձեռք բերվող ապացույցները (այդ թվում՝ ԱԱԾ-ին կատարված հարցումների պատասխանները) առավել ծանրակշիռ դեր չունեն մյուս ապացույցների համեմատ, և դիմումի վերաբերյալ որոշումը կայացվում է լիազոր մարմնի կողմից՝ բոլոր ապացույցների համադրմամբ և գնահատմամբ:

7. Ապաստանի միասնական դիմում ներկայացնելու դեպքում.

Ա) Անձը զրկվում է անհատական կարգով ապաստանի դիմում ներկայացնելու իրավունքից – **սխալ է**: Միասնական դիմումի ներկայացումը չի զրկում անձին անհատական դիմում ներկայացնելու իրավունքից:

Բ) Անձը չի զրկվում անհատական դիմում ներկայացնելու իրավունքից, սակայն նման դեպքերում անհատական դիմումի քննությունն իրականացվում է արագացված ընթացակարգով – **սխալ է:** Արագացված ընթացակարգով քննություն կարող է իրականացվել միայն ակնհայտ անհիմն հայցի դեպքում կամ կրկնական դիմումի դեպքում:Միաժամանակ, միասնական դիմումի ներկայացումը որևէ սահմանափակում չի առաջացնում անհատական դիմում ներկայացնելիս:

Գ) Միգրացիայի հարցերով լիազոր մարմինն ապաստանի միասնական դիմում ներկայացրած անձի ընտանիքի չափահաս անդամներին տեղեկացնում է ապաստանի միասնական դիմում ներկայացնելու իրավական հետևանքների և անհատական դիմում ներկայացնելու իրենց իրավունքի մասին – ճիշտ է: *Միասնական դիմումի ներկայացումը ենթադրում է ընտանիքի բոլոր անդամների դիմումների քննություն՝ մեկ վարույթի շրջանակում, որի արդյունքում ընդունվում է մեկ միասնական որոշում:*

Դ) Միգրացիայի հարցերով լիազոր մարմնի կողմից ցանկացած դեպքում կայացվում է մեկ միասնական որոշում - **սխալ է:** Ապաստան հայցողի ընտանիքի անդամների միասնական ապաստանի դիմումի վերաբերյալ ընդունվում է մեկ միասնական որոշում, բացառությամբ այն դեպքերի, երբ մեկ միասնական որոշման կայացումը կարող է հանգեցնել ապաստան հայցողի ընտանիքի անդամներից որևէ մեկի առանձնահատուկ պայմանների բացահայտմանը, որը կարող է

վտանգել նրա շահերը: Այդ դեպքում ընտանիքի այդ անդամի վերաբերյալ ընդունվում է առանձին որոշում:

8. Ապաստանի խնդրանքը կարող է դրսևորվել.

Ա) Բացառապես գրավոր ձևով՝ Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերին կամ լիազոր մարմնին կամ Ոստիկանությանը կամ ազատազրկման վայրի վարչակազմին՝ ազատազրկման վայրում – **սխալ է:** Ապաստանի խնդրանքը կարող է դրսևորվել ցանկացած ձևով, այդ թվում՝ գրավոր:

Բ) Միգրացիայի հարցերով լիազոր մարմնին ուղղված դիմումով, որն իր մեջ պետք է պարունակի Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն տրամադրելու խնդրանք – **սխալ է:** Պատասխանը թերի է: Ապաստանի խնդրանքով անձը կարող է դիմել ինչպես լիազոր մարմնին, այնպես էլ Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերին, Ոստիկանությանը կամ ազատազրկման վայրի վարչակազմին և ապաստանի խնդրանքը պարտադիր կերպով պաշտոնական դիմում չի ենթադրում:

Գ) Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերին կամ լիազոր մարմնին կամ Ոստիկանությանը կամ ազատազրկման վայրի վարչակազմին ուղղված բանավոր, գրավոր, ժեստերի լեզվով կամ հաղորդակցության որևէ այլ միջոցով առերես արված ցանկացած հայտարարությամբ – ճիշտ է: *Ապաստանի խնդրանքի քննության համար օրենսդրի կողմից որևէ ընթացակարգային նախապայման չի նախատեսվել, ավելին՝ սահմանվել է ապաստանի խնդրանքը վարչական մարմինների կողմից ընկալելի լինելու նախապայմանը, ինչպես նաև ապաստանի կարիք ունեցող անձանց հետ առնչություն ունենալու հնարավոր վարչական մարմինների ցանկը:*

Դ) Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերին կամ լիազոր մարմնին կամ Ոստիկանությանը կամ ազատազրկման վայրի վարչակազմին առերես արված հայտարարությամբ, որն իր մեջ պետք է պարունակի ապաստան հայցելու դրդապատճառների մասին տեղեկատվություն – **սխալ է**: Ապաստանի խնդրանքը կարող է դրսևորվել ինչպես առերես հայտարարությամբ, այնպես էլ գրավոր կամ ժեստերի լեզվով:

9. Միգրացիայի հարցերով լիազոր մարմնի կողմից ապաստան հայցողի հետ հարցազրույցն անց է կացվում.

Ա) Ապաստան հայցողի հետ անմիջականորեն, և հարցազրույցի «գաղտնիության երաշխավորման» սկզբունքն ապահովելու նպատակով անթույլատրելի է հարցազրույցին որևէ այլ անձի ներկայությունը – **սխալ է:** Հարցազրույցին կարող են ներկա գտնվել լիազոր մարմնի մեկ կամ մի քանի աշխատակիցներ, ինչպես նաև հայցողի փաստաբանը, որոնք պարտավոր են ապահովել հարցազրույցի «գաղտնիության երաշխավորման» սկզբունքը:

Բ) Այն լեզվով, որին տիրապետում է ապաստան հայցողը՝ ըստ անհրաժեշտության լիազոր մարմնի աշխատակցին ապահովելով հայերեն թարգմանություն – **սխալ է**: Հարցազրույցն անց է կացվում հայերեն, իսկ այն դեպքերում, երբ ապաստան հայցողը չունի հայերենի բավարար իմացություն՝ նրան տրամադրվում է անվճար թարգմանիչ:

Գ) Նախօրոք ամրակցված աշխատակցի (աշխատակիցների) կողմից և նախօրոք հրավիրված թարգմանչի մասնակցությամբ, որոնց ապաստան հայցողը չի կարող բացարկ հայտնել – **սխալ է:** Ապաստան հայցողը կարող է միջամտել հարցազրույցի ընթացքին՝ պահանջելով հարցազրույցն անցկացնել իր նախընտրած սեռի աշխատակցի կողմից, անհրաժեշտության դեպքում՝ իր նախընտրած սեռի թարգմանչի միջոցով:

Դ) Լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման աշխատակցի (ների) կողմից, որը (որոնք) մինչև ապաստան հայցողի հետ հարցազրույց անցկացնելը ապաստան հայցողին տրամադրում է ապաստան հայցողի ծագման երկրի վերաբերյալ իր ձեռք բերած տեղեկությունները և ցանկացած այլ ապացույց - ճիշտ է: *Հարցազրույցի նպատակն, ըստ օրենսդրի, ապաստան հայցողի օգտին առկա բոլոր հնարավոր հանգամանքերը պարզելն է, ուստի այն պետք է իրականացվի թափանցիկության սկզբունքով՝ նախօրոքք հայցողին տեղյակ պահելով բոլոր ապացույցների մասին:*

10. Լիազոր մարմինը կարճում է ապաստանի հայցի վարույթը, եթե.

Ա) Ապաստան հայցողը հրաժարվում է ապաստանի հայցից՝ չներկայանալով հարցազրույցին – **սխալ է:** Ապաստանի հայցից հրաժարումը կարող է դրսևորվել բացառապես գրավոր ձևով, իսկ հարցազրույցին չներկայանալը վարույթը կասեցնելու հիմք է:

Բ) Ապաստան հայցողը ծագման երկրի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու հարցում հրաժարվում է համագործակցել լիազոր մարմնի հետ – **սխալ է:** Ապաստան հայցողը լիազոր մարմնի հետ պարտավոր է համագործակցել բացառապես ապաստանի հայցի վերաբերյալ որոշում կայացնելու հարցում և նման համագործակցությունից հրաժարվելը կարող է հանգեցնել վարույթի կասեցման:

Գ) Գոյություն ունի միևնույն ապաստան հայցողի միևնույն հիմքերով ապաստանի հայցի վերաբերյալ ուժի մեջ մտած վարչական կամ դատական ակտ – ճիշտ է: *Լիազոր մարմինը չի կարող իրականացնել վարույթ այն հարցի վերաբերյալ, որն արդեն իսկ քննության է առնվել և որի կապակցությամբ առկա է իրավական ակտ:*

Դ) Վարչական վարույթը կասեցնելուց և և այդ վարույթի կասեցման մասին որոշումը ստանալուց հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, ապաստան հայցողը չի ներկայացնում լիազոր մարմնի հետ չհամագործակցելու մասին հիմնավորումը – **սխալ է**: Օրենսդիրն ապաստան հայցողին հիմնավորումներ ներկայացնելու հնարավորություն ընձեռում կասեցման որոշումը ստանալուց հետո եռամսյա ժամկետում և ոչ մեկշաբաթյա: